

Ոհանին , եւ ծնողացն Գէորգին եւ Եղիսաբեթին , եւ հանգուցեալ որդւոյն Մատթէոսին , ո՛վ ընթերցողք յորժամ ընթեռնուք՝ յիշեցէ՛ք ի յաղօթս ձեր Անտօն անարժան քահանայ , յիշեալ լիջիք առաջի անմահ զառին Աստուծոյ . ամէն , » :

«Արձանագիր եւս սոյն մատրան գրեալ ի վերայ մենաստանի վիմին , որ եզեալ է ի ճակատ վիմին սեղանոյ ըստ այսմ :

« Ի թվին ՌժՆԿԻ , վեցից տասանց եւ ութեկի ,
(1718) , ի ժամանակս Հայրապետի՝ Էջմիածնայ սուրբ Աթոռի ,
« Աստուածատուր Կաթուղիկոսի Լուսաւորչի փոխանորդի ,
« Գանձասարայ սուրբ աթոռի , Տեսուն Եսայեայ եւ տէր Ծեր-
սիսին ,
« Յայսմ երկրի Առաջնորդի՝ Պողոս անուն վարդապետի ,
« Յորդորանօք ըարեսիրի , Անտօն անուն քահանայի ,
« Պատճառ եղև եկեղեցւոյն , Աստուած ընկալ սուրբ Նշանին ,
« Դաւթի որդի Կարապետի , իւր կողակցին Գիւլանամին ,
« Իւրեանց որդւոյն Աստուածատուրին , նորաբողբոջակ Պողոսին ,
« Այլ յիշատակ Թաղէոսին , իւր կողակցին Սիմային ,
« Որդւոյն իւրեանց Արղաման կօկչին , իւր կողակցին Տաստա-
գողին ,
« Եղիսաբեթ իւրեանց Նուին , դստերն իւրեանց Մանիային ,
« Ծաղկեալ որդոցն Կօկճային¹⁾ Կարապետին եւ Սարգսին ,
« Զի այս էր իղձ մերոց սրտին , եւ կատարումս հասուցինք » :

Իսկ Սարգիս եպիսկոպոս Զալարեանցն սուրբ Նշանի համար այսպէս ասէ (նոյն հատ . յերես 398) :

« Ի հիւսիսակողմն այսր մենաստանի գոյ սագաշէն եկեղեցի , համակ սրբատաշ քարամբք կառուցեալ յանուն սրբոյ Նշանի , յորդորանօք Անտօն քահանայի և արդեամբ Դաւթի որ-

¹⁾ Գուցէ նամախօյ Կէօկչայեանցների պապը լինի , որոյ այժմեան հասնապետն է Յակօբ բէկը :